

*Urenb* *Thomasi*

1334

# ՀԱՄԱՐԱՏՈՒԹԻՒՆ


# ԱՐՔԱՍԱՆԸ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

## Գումարութիւններ միացեալ

# պատկու

ԳՈՒՄ - ԳԱԲՈՒԹԻ , ԳՈՒՄ-ԳԱԲՈՒԹԻ Գ-ՈՒՐՍԻ , ԿԵՇԻԿ ՓԱՇԱՒ ԵՒ  
ԵԼՆԻ ԳԱԲՈՒԹԻ

1896 ՅՈՒՆՎԱՐ 6 Է ՅՄԷԿ ՄԱՅԻՍԻ 1897



## Տպագր. Վ. Ա. Պերպերեան



# ՀԱՄԱՐԱՏՈՒԻՌԻԹԻՒՆ

## Աղբատասէր Ընկերութեան

ԳՈՒՄ-ԳԱԲՈՒԻ ԶՈՐՍ ՄԻԱՑԵԱԼ ԹԱՂԻՑ



1896 ՅՈՒՆԱՐ 6 Յ ՅՄԷԿ ՄԱՅԻՍԻ 1897

Մեծապատիւ Ամենապես Եթենի

Պատուարժան Հիմնադրաց Ժողովոյ

Տնօրէն Խորհուրդս բոլորած իւր շրջանը կը փութայ մատուցանել հրաժարագրոյն հետ իւր պաշտօնավարութեան օրինական համարատուութիւնը, կցելով սմա Ընկերութեանս սեպհական երկու բժշկաց տեղեկագրերն :

Պատ. Ժողովդ 96 Ապրիլ 7ին Տնօրէն Խորհրդոյ անդամ կարգեց հետեւեալ ինն անձերն .

|                   |                   |
|-------------------|-------------------|
| Տէր Արսէն քահանայ | Տ. Յովսէ փեան     |
| Տէր Ռոկի          | » Օհանեան         |
| Խաչիկ             | էֆէնտի Մ. Խանճեան |
| Կարապետ           | » Խանճեան         |
| Հայկ              | » Օ. Խօճասարեան   |
| Մեսրոպ            | » Պէյլիկճեան      |
| Պօղոս             | » Էքսէրճեան       |
| Պօղոս             | » Մինասեան        |
| Տիրան             | » Ե. Մէլիքեան     |

Յորոց Պօղոս Հքսէրճեան և Տիրան Մէլիքեան էֆէնտիք ի սկզբան անդ չ'ընդունելով Խորհրդոյս անդամակցութիւնը , և քանի մ'ամիսներէ ետք ալ Խանձեան կարապետ , Մինասեան Պօղոս եւ Պէյլիքճեան Մեսրոպ էֆէնտիք բանաւոր պատճառներով հետզետէ հրաժարելով , մնացեալ չորեքին անդամք Աղքատասէր Ընկերութեան երկու գլխաւոր և հիմնական հասութից (այն է թատերական ներկայացման՝ որ ծանօթ արգելքներու և տնտեսական տագնապի պատճառներով անհնարին եղած էր , և բաժանորդական արդեանց կարի նուազման՝ որ անխուսափելի հետեւանք էր բաւական թուով ազգայնոց գաղթականութեան և մէկ մասին ալ թաղէս այլուր փոխադրման) սպառումը ի նկատի առնլով իրենք ևս պահ մը վարանեցան , և ժամանակի ու դժուարին պարագայից առջեւ իրենց անկարողութիւնը ճանչնալով հանդերձ , բոլորովին ձեռնթափ լինել խզճի դէմ համարելով , որոշեցին ջան ի գործ դընելով շարունակել իրենց յանձնուած պաշտօնը ըստ կարելոյն , և ուրախ են յայտարարելու թէ բարեսէր ազգայնոց օժանդակութեան շնորհիւ յաջողեցաւ իր շրջանին մէջ նախորդներէն աւելի բազմաթիւ հիւանդաց խնամք տանիլ :

Ցնօրէն Խորհրդոյս աջակից գտնուած են նաև մաս մը ազնիւ և բարեջան երիտասարդ ազգայինք , որք յօժարակամ պատախանելով մեր հրաւէրին Օժանդակ Մասնախումբ մը կազմած են , և կիւրակէ օրեր Ընկերութեանս գանձանակը շրջագայելով բաժանորդագրութեան , հանգանակութեանց և զանազան պարագայից մէջ սատար եղած են Խորհրդոյս ,

Յիշեալ Մասնախմբի անդամք են .

|       |                   |
|-------|-------------------|
| Տեարք | Արամ Ռւնձեան      |
| »     | Արմենակ Հովիկեան  |
| »     | Արշակ Բէքէեան     |
| »     | Առանձար Սիմքէշեան |
| »     | Գրիգոր Քէհեաետն   |
| »     | Երուանդ Պէյազճեան |
| »     | Յակոբ Նշանեան     |
| »     | Յակոբ Պէյլիքճեան  |

- Տեարք Յովհաննէս Պուչաքճեան  
» Յովհաննէս Քէշէճեան  
» Նահապետ Աղաբեկեան  
» Ներսէս Երէցեան  
» Ստեփան Փափազեան :

Մեր շրջանի գլխաւոր հասոյթք կը կազմեն կիրակնօրեայ գանձանակաց և մեծ տօներուն չորս թաղերու Ս. Եկեղեցեաց մէջ շրջադայած պնակներու և մանաւանդ հանգանակութեանց արդիւնք, իսկ ամսական բաժնեգինի համար ընդհանուր բաժանորդաց թիւն թէեւ 147ի կը յանդի, սակայն մեծ մասը դժբաղդաբար ապառիկ մնացած է:

Տնօրէն Խորհուրդս դեռ նոր պաշտօնի ձեռնարկած, հաստատութեանս սեպհական թիշկներէն Տօք. Ճէվահիրճեան և Տօք. Մօսքօֆեան էֆէնտիք ճամբորդութեան և այլ պատճառներով հըրաժարած ըլլալով, պարտաւորեցաւ սոցա յաջորդաց ընտրութիւնը կատարել յանձինս Տօք, Տիգրան Ալլահվէրտեան և Տօք. Գրիգոր Ատիլեան էֆէնտիներու, իսկ դեղաբանի մասին համաձայնեցաւ Խորհուրդս Լանկայի թաղին դեղագործ Ֆէսմեան Խաչիկ էֆէնտիի հետ, դեղօրէից իսկական արժէքին վրայ նախ 30 առ 0%, և ապա 0գոստոս ամսոյն մէջ 25 առ 0% դեղագրոց պատրաստութեան վարձ տալու պայմանաւ, և որովհետեւ հեռաւորութեան պատճառաւ միւս թաղերու հիւանդաց դարմանի մասին դժուարութիւնք կը պատահէին, մի եւ նոյն պայմաններով Գում-Գարուի երկաթուղւոյ կայարանին մերձակայ Աւետիս էֆէնտի Զարիֆեանի դեղաբանին յանձնուեցաւ շրջակայ հիւանդաց դեղագիրներու պատրաստութիւնը առ ի դիւրութիւն աղքատ հիւանդաց :

Սոյն մօտաւորութեան հաշուով դեղագիր և բըժիչկ կը խրկուէր էթմէյտանի և չուկայի կողմերը ու պանդոկներու անկիւնները մնացող հիւանդ ազգայնց համար, բաց ի չորս թաղերէն, որոց աղքատ հիւանդք ամէն հասարակութենէ անխտիր կը դարմանուէին, երբ Խորհրդոյս կը դիմէին :

Ներկայ շրջանին մէջ Ընկերութեանս միջոցաւ դեղ, դարման և անունդ ստացած են (805) ութ հարիւր և հինգ աղքատ հիւանդ-

ներ, որոց անուանք և բնակութեան տեղիք կան արձանագրեալ ի մասնաւոր տումարի, այս հիւանդաց մէկ մասը Խորհրդոյս յանձնարարական գրերով մասնագէտ բժշկաց խրկուած են . սոյն գումարէն դուրս մեծկակ թիւ մը կը կազմեն այն հիւանդներ, որ ուրիշ բժիշկներէ ձրիապէս դարմանուելով դիմած են Ընկերութեանս և ասոնց աղքատ վիճակը ստուգուելէ յետոյ դեղ և սնունդ մատակարարուած են, այսպէսով հաստատութենէս խնամք ստացող հիւանդաց գումարը կը մօտենայ հազարի, պատկառելի գումար մը, որ կը կարծեմք թէ Ա. Փրկչի Ազգ. Հիւանդանոցի մէջ միւնոյն ժամանակամիջոցին դարմանուող հիւանդներէն նոււազ չէ :

Բժշկաց տեղեկագիրներէն բացայայտ կ'երեւի թէ սոյն հազարի մօտ հիւանդներէն Զօր միայն վախճանած են, որոց ամենքն ալ տկարակազմ տղաքներէ և ծերերէ ու յառաջացեալ թոքախտի և անբուժելի հիւանդութեան ենթակայ քանի մ'երիտասարդներէ կը բազկանան :

Տնօրէն Խորհուրդս Ծննդեան և Զատկի Ա. Տօներուն յաջողած է նաև բաւական քանակութեամբ միս, կաթ, հաւկիթ, պանիր և հացագին բաշխել բազմաթիւ կարօտ ընտանեաց, յորս յաճախ հիւանդութիւնք կը ծագին մեծաւ մասամբ սնունդի պակասութեան պատճառաւ :

Այսու ամենայնիւ Տնօրէն Խորհուրդս յաւակնութիւն չունի կարծելու թէ մեծ ինչ գործած լինի, կը խոստովանի թէ իւր անձուկ սահմանին մէջ ինչ որ կրցած է ընել, Ազգայնոց գթութեան և օժանդակութեան չնորհիւ է. ուստի յանուն տարարադդ խնամելոց քաղցր պարտաւորութիւն մը կը կատարէ երախտագիտական զգացմամբ զեղուն իւր խորին չնորհակալիքը յայտնելով ամեն անոնց, որք բանիւ և գործով աջակից եղան Խորհրդոյս և ի մասնաւորի հետեւեալ աղնուասիրտ բժշկաց, որք մարդասիրաբար դարմանած են Հաստատութեանս յանձնարարական գրերով իրենց ներկայացած հիւանդները :

Տօքթէու Խօրասանձեան Էֆէնտի  
» Խնդիրեան »  
» Էսմէրեան »

|                |                |            |
|----------------|----------------|------------|
| <b>Տօքթէոռ</b> | <b>Ամէմեան</b> | <b>պէյ</b> |
| »              | Գարագաշեան     | էֆէնտի     |
| »              | Տատուրեան      | »          |
| »              | Եազուպեան      | »          |
| »              | Արապեան        | »          |
| »              | Ճիվանի         | պէյ        |
| »              | Վարդանեան      | էֆէնտի     |
| »              | Շիրինեան       | »          |

Անհուն չնորհակալութիւն ինչպէս Եէտի-Գուլէի Ազգ . Հիւանդանոցի , նոյնպէս նաև Բանկալթիի Ս . Յակոբայ Անկելանոցի Պատ . Հոգաբարձութեան , որ Խորհրդոյս կողմէ ներկայացեալ հիւանդանոցին պատսպարեցին . Բերայի Քոյր-Աղքատախնամին որ պատրաստակամութիւն ցոյց տուաւ աչաց հիւանդութեամբ յանձնարարաբեալ խեղճին դարմանի և պատսպարման գործին օգնելու : Գարակէօզեան աղնուաշուք Գրիգոր էֆէնտիի՝ որ Ընկերութեանս անձուկ վիճակին մէջ 20 ոսկոյ կրկին նուէրովն ոգեւորեց Տնօրէն Խորհուրդս :

Ի վերջոյ՝ Ատենապետ էֆէնտի , Պատուարժան Հիմնադրաց Ժողովոյ խորին ուշադրութեան կը յանձնեմք խորհրդոյս կողմէ ներկայացեալ հաշուեկչիուր , յորմէ յայտնի կ'երեւի թէ բարենպատակ հաստատութիւնս հազիւ մի քանի ամիս պիտի կրնայ կանգուն մնալ , եթէ Ազգ . Պատրիարքարանը նպաստի նոր եւ արդիւնաւոր միջոցներով յօգնութիւն չ'փութայ , և բարեսիրաց նուիրատուութիւնը չ'զլացուին :

Խնդրելով որ Պատ . Հիմնադրաց Ժողովդ բարեհաճի անյապաղ ձեռնարկել ըստ օրինի նորոգ ընտրութեան Տնօրէն Խորհրդոյ , որուն անմիջական պէտք ունի բարենպատակ հաստատութիւնդ :

### Մնամք յարդանօք

20 Յունիս 1897

Անդամք Տնօրէն Ժողովոյ

ՈՍԿԻ ՔՀ. ՕՀԱՆ

ԱՐՄԵՆ ՔՀ. Ս. ՑՈՎԵՒՓԵԱՆ

Հ. ԽՕՃԱՍԹՐԵԱՆ

ԽԱՉԻԿ Մ. ԽԱՆՃԵԱՆ

ՀԱՅՈՒԹԵԿԻՆ (1896 ՅՈՒՆ ՎԱՐ 6 Տ 81 ՄԱՅԻՍ 1897)

ՄԱՍԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պարփ

Պահանջ

| 1897  |   | Դր.                   | Գր.     | 1897  | Մայիս | 1                             | Դր.     | Գր. |
|-------|---|-----------------------|---------|-------|-------|-------------------------------|---------|-----|
| Մայիս | 1 | Անդորքից .....        | 1266175 | Մայիս | 1     | Նուիրատութենք .....           | 8641    |     |
|       |   | Բժշկութանք .....      | 9600    |       |       | Բաժմանորպարութենք .....       | 5148    |     |
|       |   | Մայիս .....           | 430575  |       |       | Դասմակն օճնի .....            | 36175   |     |
|       |   | Դրծակաբարի .....      | 3600    |       |       | Գանձանութենք .....            | 461650  |     |
|       |   | Քարտուղարի .....      | 1700    |       |       | Պանակ .....                   | 514075  |     |
|       |   | Կարի .....            | 155150  |       |       |                               | 23908   |     |
|       |   | Հաւաքնութենմ .....    | 51425   |       |       | Վիճակ (Խուազեալ հասոյք) ..... | 1184950 |     |
|       |   | Դրամական ծախուց ..... | 744     |       |       |                               |         |     |
|       |   | Հրամանաց ծախուց ..... | 118025  |       |       |                               | 3585750 |     |
|       |   |                       | 3585750 |       |       |                               |         |     |
|       |   |                       | =====   |       |       |                               | =====   |     |

ԵԼԻՑԱՅԻՐ

Պարփ

Պահանջ

| 1897  |   | Դր.                                     | Գր.     | 1897 | Դր. | Գր. | 1897                                | Դր.     | Գր. |
|-------|---|---|---------|------|-----|-----|-------------------------------------|---------|-----|
| Մայիս | 1 | Դրամական - պատրաս գրամ .....            | 5475    |      |     |     | Վիճակ . նախորդ տարուան վիճակը ..... | 2153525 |     |
|       |   | Զամակն պարտապանաց .....                 | 277025  |      |     |     |                                     |         |     |
|       |   | Կարտանաց .....                          | 134050  |      |     |     |                                     |         |     |
|       |   |   | 958575  |      |     |     |                                     |         |     |
|       |   | Ներկայ տարոյ հուազեալ հա-<br>սոյք ..... | 1194950 |      |     |     |                                     |         |     |
|       |   |   | 2153525 |      |     |     |                                     |         |     |
|       |   |   | =====   |      |     |     |                                     |         |     |

Այժմասակէ Ընկերութեան Տնօրեն Խորհրդ տիժ տաս և  
լից ամսեայ հառուելիքով բնիւրվ և տուաց մետքա-  
շերով յար և նման գտամ:

Հրամանաց Ժողովոյ Այժմասակէ Ընկ.

Առենուրութիւն

Առենապես

ԽՄՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՆՐԻԿԵԱՆ

Մ. Յ. ՄԵԼԻՔՅԱՆ

## ՊԱՏՃԵՆ

ՏՐ. ՏԻԳՐԱՆ ԱԼԱՀՎԵՐՏԵԱՆ ԷՖԷՆՏԻԻ ՏԵՂԵԿԱԴՐՈՅՆ

Առ

Պատուարժան Տեօրէն Խորհուրդ Աղյատասէր ընկերութեան չորս միացեալ բաղերու Գում-Գարուի :

Տեարք

Վերջացող տարեշրջանի մէջ յանուն պատուարժան Խորհրդոյդ գարմանած հիւանդներուս մասին ունեցած դիտողութիւններս և գործառնութիւնս պարունակող սոյն տեղեկագիրս կուգամ ներկայել Պատ. Խորհրդոյդ :

Ինչպէս որ ստորեւ ներկայացուած ցուցակէն մանրամասնութեամբ պիտի տեսնուի, իմ միամեայ պաշտօնավարութեանս միջոցին (1896 մայիս 1 է մինչև 1897 մայիս 1) դարմանած եմ 319 հիւանդներ, որոց 210 իգական սեռէ և 109 արական սեռէ են:

Սոյն նշանակուած 319 թույն մէջ են նաեւ այն 33 հիւանդները՝ որք միայն բժշկական խնամք յանուն Պատ. Խնամակալութեանդ վայելելով դեղօրէից ստակը իրենց քսակէն վճարած են ըստ յանձնարարութեան Պատ. Տնօրէն Խորհրդոյդ :

Դարմանած անձերուս հիւանդութիւններն արձանագրութեանցս մէջ բաժնուած են հետեւեալ կերպիւ.

|              |                               |       |
|--------------|-------------------------------|-------|
|              | Eczémas                       | Առ 10 |
| ՀԻՄՆԴՈՒԹԻՒՆ  | Pityriasis rosé de Gïbert     | ,, 4  |
| <b>ՄՈՐԹԻ</b> | Gale                          | ,, 3  |
|              | Pityrassis versicolore        | ,, 1  |
|              |                               | <hr/> |
|              |                               | ,, 18 |
| ԶԴԱՑԻՆ       | Migraine                      | ,, 10 |
|              | Hysterie                      | ,, 7  |
|              | Nevropathie cérébro-cardiaque | ,, 3  |
|              | Meningite                     | ,, 1  |
|              | Congestion cérébrale          | ,, 3  |
|              | Anémie cérébrale              | ,, 1  |
|              | Nevralgie                     | ,, 3  |
|              |                               | <hr/> |
|              |                               | ,, 28 |
| ՇԵՍԱՌԱԿԱՆ    | Bronchite                     | ,, 7  |
|              | Broncho-pneumonie             | ,, 3  |
|              | Laryngite                     | ,, 13 |
|              | Bronchectasie                 | ,, 2  |
|              | Coqueluche                    | ,, 10 |
|              | Asthme                        | ,, 5  |
|              | Pneumonie                     | ,, 4  |
|              | Fluxion de Poitrine           | ,, 2  |
|              | Phtisie pulmonaire            | ,, 8  |
|              |                               | <hr/> |
|              |                               | ,, 53 |
| ԱՐԵՎԱՆ       | Insuffisance mitral           | ,, 17 |
| ԵՐՋԱԼԴՈՒԹԻՒՆ | Dilatation de cœur            | ,, 6  |
|              | Angine de poitrine            | ,, 4  |
|              | Palpitations                  | ,, 13 |
|              |                               | <hr/> |
|              |                               | ,, 40 |
| ՄԱՐՍՈՎԱՆԹԻՒՆ | Dilatation de l'estomac       | ,, 4  |
| ԳՈՐԾԱՄԱՆԱՑ   | Dyspépsie                     | ,, 17 |
|              | Gastralgie                    | ,, 5  |
|              | Enterite aiguë                | ,, 7  |
|              | Dysenterie                    | ,, 3  |
|              | Tuberculeuse intestinal       | ,, 4  |
|              | Vers intestinaux              | ,, 3  |
|              |                               | <hr/> |
|              |                               | ,, 43 |
|              |                               | <hr/> |
|              |                               | 183   |

|                |                               |     |     |
|----------------|-------------------------------|-----|-----|
| ԼԵՍՐԴԱՑԻՆ      | Lithiasie bitiaire            | Այս | 3   |
|                | Ictére catarrhal              | „   | 1   |
| ՄԻՋԱՑԻՆ        |                               |     | 4   |
|                | Cangestion rénale             | „   | 2   |
|                | Néphrite aiguë                | „   | 2   |
|                | Mal de Brighth                | „   | 1   |
| ՏԵԽԴԱԿԱՆ       | Colique néphrétique           | „   | 2   |
|                |                               |     | 7   |
|                | Métrite                       | „   | 22  |
|                | Avortement                    | „   | 7   |
| ԳՈՐԾԱՐԱՆԱԾ     | Accouchement                  | „   | 4   |
|                |                               |     | 33  |
|                | Fistule périrectale           | „   | 6   |
|                | Abcées                        | „   | 4   |
| ՎԻՐԱԲՈՒԺՈՒԿՈՒՆ | Fistule péri vulvaire         | „   | 1   |
|                | Antrax                        | „   | 3   |
|                | Carie des os                  | „   | 4   |
|                | Fistule thorasique            | „   | 1   |
|                | Furoncle                      | „   | 4   |
|                | Brulure second degré          | „   | 2   |
|                | Adenit                        | „   | 2   |
|                | Panaris                       | „   | 2   |
|                |                               |     | 29  |
| Ա.ՔԵՎԱՆԻ Հ Զ Ք | Variole                       | „   | 18  |
|                | Scarlatine                    | „   | 20  |
|                | Rougeole                      | „   | 4   |
|                | Oreillon                      | „   | 3   |
|                | Fievre typhoïde               | „   | 5   |
|                | Impaludisme                   | „   | 1   |
|                | Diphtherie                    | „   | 3   |
|                | Erysipèle                     | „   | 1   |
|                |                               |     | 55  |
| Ա.ՅԵՒ.ՅԵՒ.ՅԵՒ. | Rhumatismus astirulaire aiguë | „   | 4   |
|                | „ muscular                    | „   | 2   |
|                | Saturnisme                    | „   | 2   |
|                |                               |     | 8   |
|                | Ընդհանուր գումար              |     | 313 |

իմ խնամած 319 հիւանդներէն միայն 10 մահ պատահած է, որոց ցուցակը ստորեւ մանրամասն նշանակուած է:

Մ Ա Հ Ա Յ Ո Ւ Ց Ա Կ

1. — Կարապետ Սափրիչ 60 տարեկան Տավուտ փաշա Եէնի-Մահալլէ, 96 մայիս 30ին մեռած է սրտի հիւանդութեան ախտա-գնութեան շրջանի մէջ, որ արդէն իմ Պատ. նախորդիս խնամք-ները երկար ատեն վայելած էր:

2. — Արտաշէս Նշանեան 20 տարեկան Եալընըզ պագալ, 96 մայիս 30 ին հիւծախտի երրորդ աստիճանի մէջ գրեթէ և օր դեղ առնելլէ ետք մեռած է:

3. — Գէորգ Համբարձումեան 96 Յունիս 24 ին մենենմիք մեռած է, բնակութիւն Սեղբոս փողոց 7 տարեկան:

4. — Տիրու հի Յովսէփեան 75 տարեկան Ֆըշըմի փողոց, 96 օգոստոս 12 ին մեռած է սրտի հիւանդութենէ:

5. — Մայրենի Վարդուկեան, 4 տարեկան Լանկա, 96 օգոստոս 30 ին մեռած է Պոօնզո-Բնենօնիէ:

6. — Յարութիւն Պողոսեան 30 տարեկան, Եէնի-Գարու, 96 Հոգտեմբեր 30 ին հիւծախտէ մեռած է:

7. — Վահան Նշանեան, Եէնի գարու 20 տարեկան, 96 նոյեմբեր 29 հիւծախտի ախտագնութեան շրջանի մէջ, գրեթէ 2 օր հազիւ դեղ առնելրւ կարողացաւ:

8. — Երուանդ Յովհաննէսեան, 2 տարեկան, Ֆըշըմի փողոց 97 մարտ 4ին Պոօնքո-Բնէմօնիէ մեռած:

9. — Մաքրուզի Յովհաննէսեան Թավշան Թաշի 42 տարե-կան հիւծախտաւոր, որ մահամերձ վիճակի մէջ խնամցոս յանձ-նուած էր,

10 Յարութիւն Փիլիպպոսեան Թըշըճի փողոց, 10 ամսու, ծաղկէ մեռած է, պատուաստուած չ'էր, և 12 օր առանց բժկի ու դեղի անխնամ թողուելէ վերջ իմաց տրուեցաւ, այս պատճառաւ անկարելի եղաւ դեղ խմցնել:

**ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ.** — Հակառակ ծաղկի համաճարակին, որ վերջացող տարեշրջանի մէջ վարակած էր մեր թաղերը, ուրախալի է տեսնել որ մահ միայն մէկ հատ տեսնուած է, (որուն արդէն առանց պատուաստի ըլլալը նշանակուած է): Այս համաճարակէն աղքատիկ տղեկներ ազատելու մեծապէս նպաստած է դեղագործ Խաչիկ էֆ. Ֆէսճեանի նուիրած պատուաստի թիւպերը, որոնցմով պատուաստեցի շրջակայ թաղերէն 43 մանկիկներ:

Մնամ յարգանօք

Կ. Պոլիս 15 Յունիս 97

ՏՐ. ԱԼԱՀՎԵՐՏԵԱՆ

## ՊԱՏՃԵՆ

ՏՐ. ԳՐԻԳՈՐ ԱՏԻԼԵԱՆ ԷՖԷՆՏԻ ՏԵՂԵԿԱԳՐՈՅՆ

Արժանապատիւ Հայր

Ատենապէտ Պատ. Տեսօնէն Խորհրդոյ

Աղյատասէր Ընկերութեան Զորից միացեալ բաղերու:

Ներկայիւս կը փութամ ներկայացնել Զեղ մետասան ամսեայ պաշտօնավարութեանս միջոցին դարմանած հիւանդներուս վերաբերեալ մանրամասն մի տեղեկագիրը, զոր ներփակեալ կը զրկեմ Պատ. Փողովոյդ ի գիտութիւն:

Հաճեցէք այս առթիւ ընդունիլ յարգանացս հաւաստին:

Կ. Պոլիս 15 Յունիս 97

Գ. Կ. ԱՏԻԼԵԱՆ

## ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՄԱՀԵՐՈՒ

ՍԿՍԵԱԼ

1896 Յունիս մէկէ մինչ մէկ 1897 Մայիս

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Տասն եւ մէկ ամսեայ պաշտօնավարութեանս միջոցին Աղքատասէր Ընկերութեան կողմէ դարմանած հիւանդներուս մասին ունեցած ուսումնասիրութեամբս կուգամ պատկերացնել ներկայ տեղեկագրովս անոնց ունեցած հիւանդութեանց տեսակները, մատնանիշ ընելով ընկերութեան կողմէ եղած այն խզահարութիւնն և հոգատարութիւնն, որովհետեւ առհասարակ պատահած հիւանդութիւններն իրաց այդ կարօտ վիճակին մէջ կրնային ամենամեծ զոհեր ունենալ հակառակ բժշկական ամեն դարմաններու, եթէ ընկերութիւնը չը յարգէր բժշկական խիստ պատուէրներն, չը հոգար անոնց սնունդն և ամեն ողջպահիկ միջոցներն :

Մեր այցելութիւններովն աղիողորմ տեսարաններու կը հանդիպէինք և մեր տալիք դարմանները չէին կրնար ունենալ իրենց արդիւնքը անոնց ունեցած այդ ողորմելի վիճակին մէջ, թշուառութիւնը ինքնին հիւանդութեանց մթերանոց մը դարձուցած էր անոնց բոյնը, մէկ անկողնոյ մէջ 7 զաւակներ տարափոխիկ հիւանդութեամբ վարակուած դարման կը խնդրէին, ամեն տեսակ գարշահոտութիւն, սննդեան մեծ պակասութիւն և կատարեալ թշուառութիւն, ասոնց նման շատեր եւ շատեր, որոց հիւանդութեանց նոյն իսկ պատճառն է, բառին բովանդակ նշանակութեամբը, կատարեալ աղքատութիւնը, ինչպէս պիտի տեսնենք տեղեկագրիս մէջ տեսնուած հիւանդութիւններէն, զորս մի առ մի նշանակած եմ իրենց մասնաւոր անուններովք և ո՞ր տարիքի եւ սեռերու պատահած ըլլալը :

Բարեբաղդ եմ որ Պատ. Տնօրէն Խորհրդոյ կողմէ եղած ջանքերու շնորհիւ ապարդիւն չ'մնացին մեր աշխատութիւններն և 227 հիւանդներէն, որոնց 10ը մահերը կը կազմեն, մնացած 104ը արական և 113 լ իգական սեռէ է, և 13ը առաջին տղայութեան մէջ, 59ը երկրորդ տղայութեան մէջ, 57ը պատանեկութեան մէջ և 85ը չափահասութեան մէջ պատահած են:

Եւ մահերու մասին պէտք եղած բացատրոէթիւնները մահացուցակիս մէջ մանրամասն բացտարած եմ:

Ի վերեւ նշանակեալ 217 ապաքինեալ հիւանդներէ զատ ունեցած եմ 10 հիւանդներ եւս (4ը՝ արական 6ը՝ իգական սեռէ) որոց հիւանդութիւններն յետ քննութեան երկարատեւ ըլլալը հաստատուելով, ըստ խնդրանաց՝ եւ Պատ. Խորհրդոյդ միջոցաւ յանձնած եմ Ազգային Հիւանդանոցի:

Նաեւ 11 հիւանդներ (5ը՝ իգական, 6ը՝ արական) իրր հիւանդթէպէտեւ մասնաւոր տոմսերով ներկայացած, սակայն ի վերջոյ բոլորովին հրաժարած են դեղ առնելէ:

Ասոնցմէ 2ը Բ.րդ. • տղայութեան  
3ը Պատանեկութեան  
6ը Չափահասութեան } տարիք կը ներկայացնեն

---

### Մ Ա. Հ Ա. Ց Ո Ւ Ց Ա. Կ

1. — Արշակ Մելքոնեան, 17 տարեկան, բնակութիւն Գումարու Խնձիր տիպի. Ներքնաղաղանդի հիւծախտ (Peritonite tuberculeuse) արդէն դարմանուած, հակառակ մեր ճիգերուն անկարելի եղաւ բուժել:

2. — Թէնսում Մանդակունի, 27 տարեկան, բնակութիւն՝ Գումարու, ծննդարերութենէ վերջ առաջ եկած ստինքի պալար ունէր, (Abcès du sein gauche) եւ աջակողմեան թոքատապ (Pneumonie infectieuse du côté droit): Յիշեալ հիւանդին ծնընդարերութենէն 12 օր վերջ կոչուած եմ, որով հիւանդութիւնն

իւր կատարեալ յառաջիսաղացութիւնն ընելով բժշկական ամեն խնամք ապարդիւն մնացին :

3. — Սաթենիկ կարապետեան, 16 տարեկան, բնակեալ Ճիմ-ճիմ Մէյտան հիւանդութիւնն էր թոքային ժառանգական հիւծախտ (Phthisie pulmonaire) :

4. — Յակովը Մանուկեան, 21 տարեկան, բնակեալ թափ-շան թաշի եօգուչու, հիւանդութիւն՝ գիճութենէ յառաջ ե-կած հիւծախտ, հակառակ մեր ամեն պատուէրներու և բժշկական դարմաններու անկարելի եղաւ արգիլել իւր մոլութիւնն :

5. — Ռոպէնսօն Գրիգորեան, 2 ½ տարեկան, բնակեալ ի թում-դաբու . ցնցղաթոքատապ (Broncho-pneumonie) :

6. — Ցովհաննէս Բարմաքսըզեան, 21 տարեկան, բնակեալ Գոմ. Գարու, հիւանդութիւն՝ վերջին աստիճանին հասած թոքախտ. մեռաւ առանց դեղ առնելու :

7. — Օհան Պետրոսեան, 45 տարեկան, բնակեալ ի Գատրըկա հիւանդութիւն՝ թոքախտ. հազիւ կրցի երկու անգամ այցելել :

8. — Մինաս Գրիգորեան, բնակեալ Մոլլա թաշի աղեաց հիւ-ծախտ (Enterite tuberculeuse) :

9. — Արամ Յարութիւնեան, 1 տարեկան, բնակեալ ի Նշաննէի, կապոյտ հազի հետևանքով ցնցղաթոքատապ (Broncho-pneumonie) :

10. — Ալիքսան Գրիգորեան, 18 տարեկան, բնակեալ՝ Էլ-մէյտան, ենթակայ եղած աղեաց հիւծախտէ (Entérite tuberculeuse) չ'կրնալով ազատիլ մեռաւ, հակառակ եղած վեցամսեայ դարման-ներու :

Վերոյիշեալ մահերէն մեծագոյն մասը աղեաց, ներքնաթա-ղանթի և թոքային հիւծախտաւորներ ըլլալով, բուժումը արդէն անկարելի էր, իսկ մնացեալ 217 ապաքինեալներու հետ բաղդա-տելով սոյն մահերը, շատ աննշան համեմատութիւն մը կը ներ-կայացնէ :

ԱՊԱԳԻՆԵԱԼՆԵՐՈՒ 80ԻՑԱԿ

| ԴՐ | ՀԱԽԱՆԴՈՒԹԻՒՆ                               | ԱՐ-Ի | ԲԻ-Ի | Ա.ՏԵՐ-Ի | Բ.ՏԵՐ-Ի | Հ.ՏԵՐ-Ի | Դ.ՏԵՐ-Ի | Ե.ՏԵՐ-Ի |
|----|--|------|------|---------|---------|---------|---------|---------|
|    |  |      |      | Ա.ՏԵՐ-Ի | Բ.ՏԵՐ-Ի | Հ.ՏԵՐ-Ի | Դ.ՏԵՐ-Ի | Ե.ՏԵՐ-Ի |
| 11 | Ընդհատական ջերմ (fièvre intermitente)      | 4    | 7    | 1       | 2       | 4       | 4       |         |
| 1  | Լեռողային արենակոյտ (congestion du foie)   | 1    | 1    |         | 2       |         |         | 1       |
| 2  | Բերանի բորբոքում (stomatite aphtense)      | 1    | 1    | 1       | 1       |         |         |         |
| 2  | Կեղծմաշկ (diphtherie)                      | 1    | 1    |         |         |         |         |         |
| 17 | Ստամոքսային տագնապ (embaras gastrique)     | 6    | 11   |         | 7       | 3       | 7       |         |
| 3  | Ստամոքսատապ (gastrite aiguë)               | 1    | 2    |         |         | 1       |         | 2       |
| 8  | Ստամոքսատապ հին (gastrite chronique)       | 3    | 5    |         |         | 2       | 6       |         |
| 5  | Դժուարամարտութիւն (dyspepsie stomacal)     | 2    | 3    |         |         | 2       | 3       |         |
| 3  | Ստամոքսացաւ (gastralgie)                   | 1    | 2    |         |         | 3       |         |         |
| 4  | Ստամոքսի ընդլայնում (dilata de l'estomac)  | 2    | 2    |         |         | 2       | 2       |         |
| 8  | Աղեաց բորբոքում (entérite aiguë)           | 2    | 6    | 5       | 3       | 3       | 2       |         |
| 9  | Ստամոք. աղեաց բորբոքում (gastro entérite)  | 5    | 4    |         | 4       |         |         |         |
| 3  | Թանձը (dyserterie)                         | 3    |      |         |         | 1       | 2       |         |
| 5  | Աղեաց ճիխ եւ երիզակ (vers intestinaux)     | 1    | 4    |         | 2       | 2       | 4       |         |
| 4  | Ռւղեղային արենակոյտ (congestion cérébrale) | 3    | 1    |         |         |         |         | 1       |
| 1  | Ռւղեղային անարիթնութ. (anémie cérébrale)   | 1    |      |         |         |         |         |         |
| 4  | Արգանդախեղ (hystérie)                      | 1    | 3    |         |         | 3       | 1       |         |
| 3  | Ազդերային չդացաւ (névralgie sciatique)     | 2    | 1    |         |         |         |         | 3       |
| 13 | Ճաղկախտ (variole)                          | 7    | 6    |         | 13      |         |         | 5       |
| 5  | Կարմրախտ (scarlatine)                      | 2    | 3    |         | 4       | 1       |         |         |
| 1  | Օձացաւ (érysipèle)                         | 1    |      |         |         | 1       |         |         |
| 1  | Գորումա-լութ (oreillons)                   | 1    |      |         | 1       |         |         | 3       |
| 5  | Ցօղացաւութիւն (rhumat. articu. aiguë)      | 1    | 4    |         |         | 2       |         |         |
| 7  | Մաստիկ ցնցատապ (bronchite aiguë)           | 4    | 3    |         | 2       | 3       | 2       |         |
| 5  | Ժամանակաւոր ցնցատապ (bronch.-chronique)    | 2    | 3    |         |         | 1       |         | 4       |
| 9  | Կապոյթ ճազ (coqueluche)                    | 6    | 3    | 6       | 3       |         |         |         |
| 2  | Ժանրաշնչութիւն (asthme)                    | 2    |      |         |         |         |         | 2       |
| 4  | Թորա. արենախոնում (congestion pulmonai.)   | 4    |      |         |         | 1       | 2       | 1       |
| 19 | Թորատապ (pneumonie aiguë) (Յ-Ի-Ւ-Լ-Ե-Դ)    | 12   | 7    |         | 7       | 3       | 9       |         |
| 2  | Թորախտաւոր ճախ. (tuberculose pulmon)       | 1    | 1    |         |         | 2       |         |         |
| 5  | Կողախիթ (pleurésie aiguë)                  | 4    | 1    |         |         | 3       |         | 2       |
| 14 | Անարիթնութիւն (anémie)                     | 8    | 6    |         | 4       | 7       | 3       |         |
| 3  | Սրտի հիւանդութիւն (iusuffis. mitral)       | 1    | 2    |         |         |         |         | 3       |
| 1  | Ածխային թունակորում (intoïcation charbon.) | 1    |      |         |         | 1       |         |         |
| 5  | Վիժուում (avortement)                      | 5    |      |         |         | 1       | 4       |         |
| 2  | Ծննդաբերութիւն (accouchement)              | 2    |      |         |         |         | 2       |         |
| 4  | Արգանդային հիւանդութիւն                    | 4    |      |         |         |         |         | 4       |
| 2  | Աչքի բորբոքում (conjunctivite catarr.)     | 1    | 1    |         |         | 1       | 1       |         |
| 4  | Քու (gale)                                 | 1    | 3    |         |         | 3       | 1       |         |
| 2  | Էկզէմա (éczéma)                            | 2    |      |         |         |         | 2       |         |
| 8  | Վիրաքուժական զործողութիւն                  | 4    | 4    |         | 3       |         |         | 5       |

ԳԱԱ Դիմնարար Գիտ. Գրադ.



FL0541468

[2043]

Chay  
332

Thiaw  
Arcaib — Uymurk  
Uymurk — Uymurk